# FICHE EXPLICATIVE SCANNER EN ARMENIEN



Ձեր սկանի ենթարկվելու պայմանավորվածությունը ծրագրված է՝_____

Խնդրում ենք վերցրեք Ձեզ հետ Ձեր Vitale քարտը( ֆրանսիական սոցիալական քարտ), այս պայմանագիրը, Ձեր վերջին ռենտգենները և սրսկման նյութը (սկաների համար), եթե այն Ձեզ նշանակված է եղել:

## Իմֆորմացիա սկաների վերաբերյալ

**Ի՞նչ է սկաները**

Դա ռադիոլոգիական տեխնիկա է, որը թույլ է տալիս լայնական կտրվածքով պատկերել մարդկային մարմինը: Պատկերումները շատ ճշգրիտ են՝ սկաները կարողանում է այնպես անել, որ մի միլիմետրի վրա մանրամասներ ի հայտ գան: Սկաները օգտագործում է ռենտգենյան ճառագայթներ:

**Զննման մասին**

Դուք կպառկեք զննման մահճակալին՝ շատ հաճախ հետևի վրա: Մահճակալը կանցնի լայն օղակի միջով: Ձեզ կթողնեն միայնակ զննման սենյակում: Մասնագետները և ռադիոլոգները կլինեն պատուհանի հետևում: Ամբողջ զննման ընթացքում նրանք տեսնելու են Ձեզ, լսելու են Ձեզ և խոսելու են Ձեզ հետ բարձրախոսի միջոցով:

Ձեր համագործակցությունը անհրաժեշտ է: Դուք պետք է մնաք անշարժ, և Ձեզ կասեն, թե երբ դադարեք շնչել: Երբեմն անհրաժեշտ է զննման ընթացքում կատարել նյութի ներերակային սրսկում: Այդ դեպքում, նախքան պառկելը, մի փոքր ասեղ կմտցվի Ձեր բազուկի երակը:Սրսկման նյութը հիմնականում բաղկացած է լինում յոդից: Երբեմն Դուք ինչ-որ ջերմություն կզգաք կամ ինչ-որ տարօրինակ համ կզգաք Ձեր բերանում:

Զննումը տևում է 5-ից 15 րոպե:

**Ի՞նչ պետք է անել զննումից հետո:**

Չկա ինչ-որ յուրահատուկ նախազգուշական միջոց: Դուք կարող եք սովորականի պես սնվել:

**Ի՞նչ բարդություններ կարող են առաջանալ**

Յուրաքանչյուր միջամտություն մարդկային մարմնի վրա, եթե նույնիսկ այն իրականացվում է հմուտ անձնակազմի միջոցով, որոնք դիմում են մաքսիմալ նախազգուշական միջոցների, բարդության առաջացման ռիսկ է պարունակում: Դա առաջանում է ոչ թե սկաներից, այլ հնարավոր է յոդի սրսկումից:

- Սրսկումը կարող է առաջացնել տհաճ, սակայն անվնաս կապտուկ: Այն կանհայտանա մի քանի օրից:
- Սրսկման ընթացքում մաշկի տակ նյութի հոսք կարող է նկատվել: Այս բարդությունը հազվադեպ է հանդիպում և բուժվում է տեղային կերպով:
- Հավանական է, որ օրգանիզմը յոդը չընդունի կամ ալերգիկ ռեակցիաներ առաջ գան: Դրանք սովորաբար անցողիկ են և լուրջ չեն:

# FICHE EXPLICATIVE SCANNER EN ARMENIEN

## Հարցաթերթիկ լրացնելու համար

Շնորհակալություն հետևյալ հարցերին պատասխանելու համար՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 - Դուք վերջերս ստուգել եք Ձեր մարսողական համակարգը հակազդող նյութի միջոցով | Այո | ☐ | Ոչ | ☐ |
| 2 - Դուք ալերգիկ եք | | | | |
| - որոշ դեղամիջոցների նկատմամբ | Այո | ☐ | Ոչ | ☐ |
| - դուք ասթմա ունեք | Այո | ☐ | Ոչ | ☐ |
| Դուք ալերգիկ ռեակցիա ունեցել եք նախորդ ստուգման ընթացքում | Այո | ☐ | Ոչ | ☐ |
| 3 - Դուք դիաբետիկ եք | Այո | ☐ | Ոչ | ☐ |
| Եթե այո, ապա Մեթֆորմին ընդունել եք | Այո | ☐ | Ոչ | ☐ |
| 4 - Դուք հղի եք կամ հնարավոր է, որ լինեք | Այո | ☐ | Ոչ | ☐ |
| Դուք կրծքով կերակրում եք | Այո | ☐ | Ոչ | ☐ |
| 5 - Դուք երբևիցե երիկամների խնդիր ունեցել եք | Այո | ☐ | Ոչ | ☐ |
| 6 - Դուք համաձայն եք հականյութի ներերակային սրսկման եթե անհրաժեշտ լինի | Այո | ☐ | Ոչ | ☐ |

Պարոն, Տիկին _____

Անձնապես լրացրել է այս փաստաթուղթը _____

Եվ համաձայնվել է, որ զննումը իրականացվի:

Ստորագրություն՝